

Արմեն Բուդաղյան

Երևանի պետական համալսարանի պրոռեկտորի տեղակալ
համալսարանի զարգացման և կրթական բարեփոխումների գծով,
տեխնիկական գիտությունների թեկնածու

Արմեն Բուդաղյանը ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի (այժմ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան/ՀՊՃՀ) մեխանիկական ֆակուլտետը 1984թ-ին: Ասպիրանտական կրթությունը ստացել է Մոսկվայի Ավտոմոբիլա-ճանապարհային ինստիտուտում՝ 1987-1989թթ.: 1990-ին ստացել է տեխնիկական գիտությունների թեկնածուի աստիճան: 2006թ.-ից Հանդիսանում է ՏԵՄՊՈՒՄ-ի Բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագետների ազգային թիմի անդամ: 2007թ.-ին հիմնել և մինչ այժմ ղեկավարում է «Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն» հասարակական կազմակերպությունը:

Մասնագիտական փորձառությունը

2007-ից – Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) պրոռեկտորի տեղակալ համալսարանական զարգացման և կրթական բարեփոխումների գծով

2005-2007 - ՀՊՃՀ պրոռեկտորի տեղակալ մագիստրատուրայի և ասպիրանտուրայի գծով

1993-2005 - ՀՊՃՀ Ասպիրանտական դպրոցի տնօրենի տեղակալ

1995թ.-ից - ՀՊՃՀ դոցենտ

1991-1993 - ՀՊՃՀ տրանսպորտային համակարգերի ֆակուլտետի ղեկանի տեղակալ

2009 – Կառնեգի կորպորացիայի՝ Համալսարանների կառավարման աջակցման ծրագրի մասնակից է: Նեբրասկայի համալսարանի (Լինկոլն, ԱՄՆ) Կրթության կառավարման ղեկավարումն ստանալով է ուսումնասիրություն “*Որակի ներքին սպասնովումը ամերիկյան համալսարաններում*” թեմայով

2004 - Համաշխարհային բանկի «*Բարձրագույն կրթությունը և ինովացիոն համակարգերը Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում*» նախագծում հանդես է եկել որպես ազգային խորհրդատու/հետազոտող

2001 - Պիտբուրգի համալսարանի (ԱՄՆ) Բարձրագույն կրթության կառավարման ինստիտուտում անցել է կառավարման պրակտիկա

2001 - Միչիգանի համալսարանի (ԱՄՆ) Բարձրագույն կրթության հետազոտությունների կենտրոնում անցել է որակավորման բարձրացման ծրագիր: Կատարել է ուսումնասիրություն՝ «*Բարձրագույն կրթության վարչարարությունը և համալսարանական կառավարումը շուկայական տնտեսության պայմաններում*» թեմայով

Ղեկավարել կամ հանդես է եկել որպես փորձագետ ԲՀԲՕՀ - Հայաստան, Համաշխարհային բանկի և Եվրահանձնաժողովի Տեմպուս ծրագրի կողմից ֆինանսավորվող բազմաթիվ միջազգային նախագծերում, որոնք նպատակաուղղված են Հայաստանի բարձրագույն կրթության համակարգի արդիականացմանը: